

ԼԱՅՐՆԻՑԸ ՀԱՅՆՐԻ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայագիտության եվրոպացի երախտավորների՝ Զ. Պետերմանի, Ֆ. Վինդիմանի, Ֆ. Բոպպի, Ֆ. Մյուլլերի, Բ. Լազարդի, Մ. Լաուերի, Ս. Բուգենի, Զ. Հյուրշմանի, Ֆ. Ֆինկի, Մ. Բրոսսի, Ա. Մեյերի և այլոց կողմից պատմավոր տեղումի նաև գերմանացի խոշոր գիտնական, գերմանական լուսավորական շարժման ականավոր ներկայացուցիչ, հասարակական աջի ընկնող գործիչ Գոտֆրիդ Վինդիման (1646—1716 թթ.)։ Սույն հաղորդումով ընթերցողներին ենք ներկայացնում Լայբնիցի նամակները՝ ուղղված Ֆրանսիացի անվանի արևելագետ-հայագետ ու նշանավոր լեզվաբան Վեյսի և Կրոդի (1661—1739), որոնք «Հայկական պատմություն» Լայբնիցի նամակներին վերաբերող 1946 թ. տպագրվել են «Բաղմավեպի» 4—7 համարներում (էջ 123—133) և մոսկովյան են տրվել թե՛ հայ և թե՛ օտար հետազոտողների կողմից։

Փ. Լայբնիցը, որ առավելապես հայտնի է որպես դասական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ, լինելով բաղմակողմանի զարգացած անձնավորություն, իր ուժերը փորձել է գիտության շատ բնագավառներում։ Բացի այդ, նա ժամանակ է գտել նաև զբաղվելու աշխարհի ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի պատմության, լեզվի և պատմական մի շարք հուշարձանների ուսումնասիրությամբ։ Այս ամենի, մասնավորապես հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության հետ էր ունեցած ծանոթության համար Լայբնիցը իրեն պարտական էր համարում անվանի հայագետ Մաթյուրեն Վեյսի և Կրոդի, որի հետ երկար տարիներ գիտական համագործակցության և սերտ նամակագրական կապերի մեջ էր։ Լա Կրոդի շնորհիվ է, որ Լայբնիցը սկսել է խորապես հետաքրքրվել հայ ժողովրդի ճակատագրով, հայոց լեզվով ու մշակույթով, հետաքրքրություն, որը «...հայերու հանդեպ այնքան ավելի հաճելի է, որքան որ իր ակնարկություններն են և, հուշերը, որոնք «Բաղմավեպ» որակում է որպես «հատուկ զնահատականի արժանի»։ 1687—1690 թթ. ճանապարհորդելով Ավստրիայում և Իտալիայում, Լայբնիցը, իր գործունեության բուն նպատակից

բացի, ազատ ժամերին հետաքրքրվում է նաև հայկական մշակույթով, առավելապես ճարտարապետական հուշարձաններով, եվրոպայում ապրող հայերի կենցաղով ու գործունեությամբ, և վերականգնող հայագիտությամբ։ Նա կապեր է հաստատում Ամստերդամի հայ տպագրիչների և նրանց հովանավոր Ղուկաս Վանանդեցու հետ։

Լայբնիցը անդրադարձել է մի շարք լեզուների ծագումնաբանական և պատմական ընդհանրությունների հարցերին։ Մասնավորապես հետաքրքրվել է հայոց լեզվի հետ այլ լեզուների ունեցած փոխհարաբերության խնդրով, խրախուսել այդ բնագավառում Լա Կրոդի հայագիտական շահեկան գործունեությունը։ Որոշ աղբյուրները⁴ հայտնի է դառնում, որ Լայբնիցը Լա Կրոդի

¹ Այս ամենի մասին նա մի շարք գրառումներ ու նամակներ ունի ուղղված Լա Կրոդին։ Հայերի և հայերենի մասին բավականաչափ տեղեկություններ են պարունակում նաև Լայբնիցի՝ Նամբուրգի „Conrad Widou“ ընկերության ուղղված մի քանի նամակները (դրանց մասին տե՛ս Monsieur de la Croze a un savoir tres etendu, mais il a surtout un talent tres grand pour les langues. Apres avoir defriche l'Armenien, il va au coptes.

² Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան. հ. 4, Երևան, 1978, էջ 481։

³ Տե՛ս նույն տեղում և Լայբնիցի՝ Լա Կրոդին գրած նամակները։

⁴ Տե՛ս մասնավորապես Լայբնիցի՝ Լա Կրոդին գրած 16-րդ նամակը, որի մասին «Բաղմավեպ» (1940, № 4—7, էջ 127—128) գրում է, թե նկատի ունենալով Լայբնիցի «...ակնարկությունները կամ հայերեն բառերը համեմատության կոչելը, կարծես ստիպված պիտի լինենք ասելու, թե նա հայերեն գիտեր գեթ տարրական չափով մը, եթե չնկատենք, թե իր այդ գիտությունը մեքենաբար փոխառնված է Լա Կրոդի կամ բառարանից։ «Ակնարկության» կամ «բառերը համեմատության կոչելու» մասին խոսքը վերաբերում է հայերեն մի բառին, որը Լայբնիցի կարծիքով, «նույնը կթվա ալպան և էսքլա-

և բառարանների օգնությամբ ուսումնասիրել և ինչ-որ շահով տիրապետել է Հայերենին: Լա Կրոդին մասին իր նամակներում խոսում է գովեստով՝ մեծագույնս գովատելով նրա լեզվաբանական տաղանդը, լեզուների ուսումնասիրության բնագավառում նրա ձեռք բերած ակնառու նվաճումների մեծ բաժինը վերապահելով Հայերենին: Նա իր բարեկամ Լա Կրոդին խորհուրդ է տալիս ավելի խորանալ Հայերենի ուսումնասիրության մեջ, միաժամանակ ընդգծելով, թե հայերը արժանի են, որ իրենց համար անեք այն ամենը, ինչ որ հնարավոր է: Այս իմաստով Լալբենցը, ինչպես երևում է Լա Կրոդին գրած նույն նամակից, շահագնաց բարձր է գնահատում Յոսիփ Շրոդերի եռանդն ու աշխատասիրությունը, հատկապես Հոլանդիայում լույս տեսած նրա «Գանձ արամեան լեզուի» մեծարժեք աշխատությունը, որտեղ հեղինակը բավականաչափ փաստական տվյալներ է հաղորդում հայերի և հայոց լեզվի վերաբերյալ:

Լալբենցն այն համոզմանն էր, որ հայերենը, լինելով աշխարհի հնագույն և ինքնատիպ լեզուներից մեկը, բավականաչափ հնարավորություններ է ընձեռում այլ լեզուների ուսումնասիրության համար: Նա իր նամակներում միաժամանակ առաջ է քաշում այն միտքը, թե հայերենը ինքնուրույն ու անկախ և ոչ թե որևէ լեզվից սերված կամ ծագումնաբանորեն նրանից կախված լեզու է:

Հայերենի ուսումնասիրության բնագավառում Լալբենցին զարմացնում է Շրոդերի աշխատասիրությունը, նրա անսպառ եռանդը հատկապես «քաղաքացիական հայերենի» (իմա՝ աշխարհաբարի) ուսումնասիրության առումով: Նա շահագնաց արժեքավոր է համարում նաև հայերենի վերաբերյալ Շրոդերի կատարած ստուգաբանությունները: Լալբենցը մեծ գնահատական է տալիս հատկապես հայ բարբառների առաջացման վերաբերյալ Լա Կրոդի առաջ քաշած տեսությունը, նկատի ունենալով, թե ինչպիսի փոթալուծություններ է նա ուսումնասիրել գրաբարի և աշխարհաբարի հնչյունաբանությունն ու քերականությունը, ուղղագրությունն ու բառապաշարը: Նույնը կարելի է ասել նաև պատմագրությանը նվիրված նրա բարձրարժեք հոդվածների մասին:

Լա Կրոդին գրած մի նամակում նա ափսոսանք է հայտնում, որ Շրոդերը ի վիճակի չէ լույս աշխարհ բերելու իր մի շատ արժեքավոր

գործը՝ «Հայերեն-լատիներեն բառարանը»: Լալբենցը ֆրանսիացի հայագետի ուշադրությունը հրավիրում է այդ բառարանի հրատարակության վրա, միաժամանակ խնդրելով՝ իրեն տեղեկություններ ուղարկել հայագետ Վոլֆրախ մասին, որովհետև, գրում է Լալբենցը, «լեզվաբան հայ լեզվի ուսման հետևանքն ու նպատակը, և վստահեմ, թե դուք անկե շատ գեղեցիկ բաներ պիտի հանեք (օգտվիք) եկեղեցական պատմության և Աստվածաշունչին համարձե: Իմանալով Լա Կրոդի այլ գործերով և կամ ոչ շատ հետաքրքիր թարգմանություններով զբաղված լինելու մասին, Լալբենցը բարեկամաբար նրան խորհուրդ է տալիս՝ հրաժարվել նման անհետաքրքիր ու երկրորդական գործերից, որպիսիք կարող են կատարել ռուսիշ հարյուրավոր անձինք և հույս հայտնում, «որ հիմա ազատված պիտի ըլլաք և դարձած ձեր սիրած հայերենին»: Լալբենցին մեծ բավականություն են պատճառում այն բոլոր լուրերը, որոնք նրան տեղեկացնում են հայերի և աշխարհի քաղաքակրթ ժողովուրդների փոխհարաբերությունների, նրանց լեզուների փոխազդեցությունների, հայերենի վերաբերյալ որևէ մեկի կողմից որևէ աշխատության ստեղծման մասին: Օրինակ՝ տեղեկանալով, որ Լա Կրոդը պատրաստել է երկհատոր լատիներեն-հայերեն և հայերեն-լատիներեն բառարան, Լալբենցը նրան նամակով հայտնում է իր միտքը. «...Բայց ես... կհամարիմ, որ դուք պիտի գահանաք երկրորդովս», հորդորելով առաջին հերթին գլուխ բերել հայերեն-լատիներեն բառարանի հրատարակությունը, որ շահագնաց կարևոր գործ է:

Լա Կրոդին ուղարկած վերջին նամակներից մեկում Լալբենցը, որ նախորդ նամակներով տեղեկություններ էր խնդրել հնագույն և հատկապես արևելյան ժողովուրդների ու ազգերի մասին, իր ֆրանսիացի բարեկամին շնորհակալություն է հայտնում հայերի և Հայաստանի մասին նրա ուղարկած արժեքավոր տեղեկությունների համար: «Ձիս երախտապարտ պիտի թողուք, պարոն, ինձի տեղեկացնելով այն կարծիքները, զոր ձեզի մատակարարած է հայերեն լեզվի խոր ծանոթությունը ազգերու ծագման շուրջ... Կթվի,—այնուհետև իր միտքն առաջ է տանում Լալբենցը,—թե՛ Մովսես (խորենացի—Վ. Ա.) մարդկային ցեղի ծագումը Հայաստանի մեջ կղնե, ինչպես գետերը՝ որոնց մասին կխոսվի, և որոնք օվկիանոս, նվաճ-սիսյան Պոնտոս և Կասպից ծով կթափին՝ նույն Հայաստանին լեռնե կիցնեն: Նվ նույն Մովսեսը

կան (սլավոնական) նույնանիշ բառերուն հետ» (տե՛ս նույն տեղում, էջ 128-ի տողատակի ծանոթագրությունը):

5 Տե՛ս Լալբենցի՝ Լա Կրոդին գրած 17-րդ նամակը:

6 Տե՛ս Լալբենցի՝ Լա Կրոդին գրած 18-րդ նամակը:

7 Տե՛ս Լալբենցի՝ Լա Կրոդին գրած 20-րդ նամակը:

8 Նույն տեղում:

մարդկային ցեղի վերանորոգությունը կգնե նույն Հայաստանի մեջ, քանի որ նա տապանը կհանգ- չեցնե Արաբատ լեռան վրա⁹։ Անկախ այս մտքից, որը հորեննացու մոտ էլ առասպելական աղբյուրներից է քաղված, լայրեցիկ հավատում է այն ճշմարտությանը, որ Հայաստանը մարդ- կության հնադույն ուստանն ու մեծ քաղաքակը- թության բնօրրանն է, իսկ հայերենը՝ աշխար- հի ինքնատիպ ու հարուստ լեզուներից մեկը։

⁹ Տե՛ս լայրեցիկ՝ Լա Կրոզին գրած 35-րդ նամակը։

Հարկ ենք համարում նշել, որ հայ ժո- ղովրդի պատմության, մշակույթի, լեզվի վերա- բերյալ Գոտֆրիդ Լայբնիցի ունեցած դատողու- թյուններից շատերը, ինչպես գրում է Քթալմա- վեպը¹⁰, թեև «զուտ ավանդական են, երբեմն էլ նույնիսկ սխալ, սակայն չեն դադարի մեզի համար հետաքրքրական ըլլալն այն գնահատական ձևին մեջ, որ կգտնվին այդ մեծ մարդուն բերնին մեջ»¹⁰։

Վ. Խ. ԱԼԵՔՍԱՆԴԱՆ

¹⁰ Քթալմալեպա, 1940, № 4—7, էջ 133։

ԱՐԳԻՇԹԻԽԻՆԻԼԻԻ ՍԱՐԿՈՖԱԳԸ

Արգիշթիխինիլի հողերը ու աշխարհիկ բնույ- թի տարատեսակ հուշարձանների շարքում կարե- ղոր տեղ են գրավում քաղաքաբնակների թաղ- ման ձևերը, ձևակերպ. և նախնական կյանքի մասին եղած պատկերացումները բացահայտող դամբա- րանները։ Վերջիններս գտնվել են Դավթի բլրա- շարքը հյուսիսից, արևմուտքից և հարավից շրջապատող տարածքում, որն այժմ զբաղեցված է ուշ ուրարտական առանձնատների փլատակնե- րով, նոր Արմավիր և Նալբանդյան գյուղերի շի- կություններով ու այգեստաններով։ Մինչ այժմ Արգիշթիխինիլիում հայտնաբերված գերեզման- ները շիրիմաթումբ կամ ստորերկրյա մեմորիալ հուշարձանի դոյուսթյունը ցույց տվող որևէ այլ առանձնահատկություն չունեն, այդ իսկ պատ- ճառով դամբարանների մեծ մասը հայտնաբեր- լել է շինարարական աշխատանքների ժամանակ, հետևաբար և դրանց ուսումնասիրությունը կա- տարվել է կիսաքանդ կամ լրիվ ավերված գե- ռեզմանների մնացորդների հետազոտության ու ուղի բնակչության հավաքված հնագիտական յուրթերի հիման վրա։ Թաղումներն Արգիշթիխի- րիլիում կատարվել են սալարկղերում, քարաբ- լրդներում, աղյուսաշեն գերեզմաններում։ Հայտ- ըն են և կարասային թաղումներ, ինչպես և թա- լումներ, երբ դիտարկված կամ դիմապատկերված սնյունի մնացորդը լցվել է կճուճի մեջ և նոր Դիայն թաղվել։

Ուրարտական թաղման ձևի ուսումնասիրու- չյան համար առանձնակի հետաքրքրություն է լերկայացնում 1973 թ. Արգիշթիխինիլի արև- լլույսյան ամբոցից 350—400 մ հյուսիս, նոր հրմավիր գյուղի բնակիչ Լևոն Սարգսյանի տնա- Իներ հողամասում գտնված քարե սարկոֆագը¹։

¹ Սա Արգիշթիխինիլիում գտնված միակ լարկոֆագը չէ, քանի որ նոր Արմավիրի բնա-

Այն տեղակայված էր 0,5 մ հաստությամբ ունե- ցող մշակույթի հողաշերտից 0,4 մ ցած, ավա- զախառն խճաքարի բնահողային շերտում։ Սար- կոֆագն ունի 45° դեպի արևելք շեղումով, հյուսիս-հարավ դիրքորոշում։ Այն փակված էր ստորին մակերեսները կոպիտ հարթեցված երեք սալաքարերով (ծածկաբալկերի լայնություն են՝ 1,1×0,48×0,1 մ, 1,05×0,52×0,12 մ, 1,16× 0,48×0,9 մ)։ Անխախտ մնացած երկու սալա- քարերի արանքը խցանված էր մանր խճաքարով ու կավով։ Նրբորդ ծածկասլուր հայտնաբերող- ները կոտրել էին, սարկոֆագի միջից հանելով դաջազարդ երեք թասեր և մեկ աճյունաափոր։

Միակտոր, սև գույնի տեղական տուֆի ժայ- րակտորից պատրաստված, կտրացող անկյուն- ներով տաշտականման սարկոֆագն ունի 1,52 մ երկարություն և միջին հաշվով մոտ 0,9 մ լայ- նություն (մի ծայրում լայնությունը 1 մ է, մյուս- սում՝ 0,75 մ)։ Պատերի բարձրությունները ևս անհավասար են. ընդլայնական պատերից մեկի բարձրությունը 0,65 մ է, իսկ դիմացինը՝ 0,55 մ։ Ցածր պատի ստորին մասում, հասակի մակարդակին հավասար, կա 3—4 սմ տրամագծով միջանցիկ մի անցք։ Ուշագրավ է, որ Հայաստանի տարածքում հայտնի են դամբարաններ, որոնց պատերին, տարբեր բարձրությունների վրա առ- կա են միջանցիկ անցքեր. փոքրիկ մի անցք է բացված Շիրակավանի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող 10-րդ դամբարանի հյուսիսային պատը կազմող խոշոր ժայռաքեկորի ստո- բին մասում. նույն ձևի անցքեր են փորված նաև 1973 թ. Արգիշթիխինիլիում պեղված սալարկղի երկու պատերին։ Բացի այս, Վաղարշապատի

կիլնների տների մոտ կարելի է տեսնել ուրար- տական սարկոֆագներ, որոնցում այժմ սովորաբար ճղմում են խաղողը։